ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՐԲԱԿԱԼՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՀԵԼՈՒ ՎԱՅՐԵՐՈՒՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴԱԿԱՆ ԽՈՒՄԲ

№ 0306/1806 20.04.2018թ.

ՀՀ ոստիկանությանպետ,
գեներալ-գնդապետ
պարոն՝ Վ. Գասպարյանին

Հարգելի պարոն Գասպարյան,

Սույն թվականի ապրիլի 15-ին Դիտորդական խումբը այցելություն կատարելով ՀՀ ոստիկանության Տավուշի ՄՎ Դիլիջանի ՁՊՎ արձանագրել է մի շարք թերություններ ու խախտումներ.

Թերություններ՝

1. Բուժմենյակի սավանը կեղտոտ, ճղված էր, իսկ ջրի ծորակը չէր գործում:
2. Ճաշասենյակում մեկ անգամյա օգտագործման սննդի սպասքը բացակայում էր:
3. Բացակայում էր նաև աման լվանալու սպունգը:
4. Էլեկտրական տաքացուցիչի լարը բաց վիճակում էր և օգտագործման ենթակա չէր:

Խախտումներ՝

ՁՊՎ-ում պահված, ձերբակալված, հաջորդիվ կալանավորված Մ.Լ.Գ-ն 30.03.2018թ-ին ժամը 23.55-ին որպես կալանավոր ընդունվել է ՁՊՎ քննիչի գրության հիման վրա, առանց ՀՀ կառավարության 2008 թվականի հունիսի 5-ի N 574-Ն որոշման 7-րդ կետի պահանջի այն է՝ *<<Ձերբակալվածներին ՁՊՎ ընդունելու հիմք է հանդիսանում Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով կազմված ձերբակալման արձանագրությունը կամ ձերբակալման մասին քրեական հետապնդման մարմնի*

ՀՀք.Գյումրի,Վ.Սարգսյան 13,
www.policemonitoring.org
Հեռ./Ֆաքս: (+374 77) 85 99 66
E-mail: info@policemonitoring.org

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՔԱՐՏՈՒՂԱՐՈՒԹՅՈՒՆ
ՄՏԻՑ ԹԻՎ 1032
«02» 05 2018թ.

*որոշումը: Իսկ **կալանավորվածներին ՀՊՎ ընդունելու հիմք է հանդիսանում քննչի, դատախազի կամ դատավորի որոշումը**>>:*

Այսպիսով՝ խնդրում ենք ուսումնասիրել ներկայացրած փաստերը և տալ մեկնաբանություն դրանց վերաբերյալ:

Հարգանքներով՝

ՀՀ ոստիկանության համակարգի ձերբակալված անձանց պահելու վայրերում վերահսկողություն իրականացնող հասարակական Դիտորդական խմբի նախագահ՝ Հ.Հովհաննիսյան

ՀՀք.Գյումրի,Կ.Սարգսյան 13,
www.policemonitoring.org
Հեռ./ֆաքս: (+374 77) 85 99 66
E-mail: info@policemonitoring.org